



Լրատու Newsletter

ԳԵՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Ապրիլ 2016
Լրատու թիւ 7

Ողջոյնի Խօսք



ԱՆԻ

Աւարտուեց 2015-2016 ուսումնական տարուայ 2-րդ եռամսեակը: Երկրորդ եռամսեակի ընթացքում, կրթական դասընթացներին զուգահեռ վարժարանում կազմակերպուել են բազմաթիւ հանդիպումներ, հանդէսներ ու ձեռնարկներ: Արժանի են նշել մանկագիր տիկ Նունէ Մարգսեանի այցելութիւնը մանկապարտեզի և նախակրթարանի աշակերտներին, Ընդհանուր Գիտելիքների Մրցոյթ, Սուրբ Վարդանանց տոնը, Մայրերի տոնը, Սուրբ Զատիկը:

Օգտուելով առիթից շնորհաւորում եմ բոլորիդ Սուրբ Զատիկի առթիւ: Մաղթում եմ բոլորիդ քաջառողջութիւն, յաջողութիւններ և երջանկութիւն:

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

ՎԱՆ

Քրիստոս Զարեալ ի

մեռելոց

Օրհնեալ է Զարութիւնը

ԿԱՐՍ

Լրատու-7-ը ներկայացնում է Վարժարանում կատարուած այդ աշխատանքները:


Շնորհակալութիւն Լրատու-7-ը կազմող յանձնախմբին՝ Տիկնայք Ստելլա Թարվերդուն, Անուշ Գեղամեանին, Քրիստինէ Նանեանին և Լենա Գիւլիսանձեանին:

Եթէ որևէ հարց կամ առաջարկ կունենաք այս շրջաբերականի բովանդակութեան վերաբերեալ, առանց վարանելու ուղարկէք էլեկտրոնային նամակ՝

E-mail: armenianschool@hotmail.co.uk



Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:





Ամանորի արձակուրդից վերադարձ վարժարան

Նոր Տարւայ և Սուրբ Ծննդեան տօների արձակուրդից յետոյ վերադարձանք դպրոց Յունւարի 10 – ին:

Տէր Շնորհք քահանայ Բաղդասարեանն այցելեց մեզ, բացատրեց նւեր տալու խորհուրդը և վերջում բոլորին բաժանեց Սուրբ Նշխարք:

Վարժարանի աշխատանքները վերսկսեցին սովորական եռանդով: Իւրաքանչիւր բաժին սկսեց ծրագրել իր երկրորդ եռամսեակի աշխատանքները, միշտ ձգտելով աւելի արդիւնաւէտ դարձնելու դրանք:

The Spring Term started on January 10th and school work resumed with the same vigour in all the stages with high aspirations. Fr Shnork Baghdasaryan visited the school to convey his blessings and to explain to the pupils the spiritual meaning of giving presents at Christmas.



Վաստակաւոր մանկավարժ Տիկին Անի Կարմիրեանի այցելությունը



Ուսուցչական կազմն առիթն ունեցաւ հանդիպելու Անի Կարմիրեանին և ծանօթանալու նրա դասավանդման արդիական մեթոդների հետ: Տիկին Կարմիրեանը լինելով վաստակաւոր մանկավարժ ստեղծել է իւրայատուկ մեթոդիկա դասավանդելու մեր մայրենի լեզուն: Նա հիմնադիրն է Ֆրանսիայի <<Մկնիկ>> վարժարանի և այժմ աշխատում է Լիզաբոնի Կիւլպենկեան հիմնարկութիւնում:

On the 24th January, Caloust Gulbengian Foundation's Armenian branch of Western division's project senior manager Ani Garmirian visited the school and met with the teachers to discuss innovative pedagogical approaches in language acquisition. She is the founder of MGNIG, an educational bilingual (Armenian-French) workshop in Paris.



Վարդանանցի նւիրած Պատարագ և ֆիլմի դիտում



Փետրւարի 4-ի երեկոյեան Սուրբ Եղիշէ եկեղեցում կատարւեց Սուրբ Պատարագ նւիրած Վարդանանց պատերազմի նահատակներին, որոնք անմահացել են մեր պատմութեան մէջ, գոհւելով յանուն մեր կրօնի: Ս. Պատարագին մասնակցեցին Թահթեան վարժարանի մի խումբ ուսուցիչներ:

On the evening of 4th February, a group of teachers attended Divine Liturgy on the Feast of St Vartan at St Yeghishe Armenian Church to commemorate the Battle of Avarayr; a fight for religious freedom.



Երրորդից բարձր դասարանների աշակերտները Փետրւարի 21-ին դիտեցին մի ֆիլմ, որը բացատրում էր Վարդան Մամիկոնեանի կիրառած ռազմավարական ձևը Աւարայրի ճակատամարտի ընթացքում, որի միջոցով նա կարողացաւ հայկական փոքրաթիւ բանակով մեծ վնաս հասցնել պարսիկների հսկայական զօրքին:

On February 21st, the pupils watched a video on the Battle of Avarayr and the military strategies deployed by Vartan Mamigonian against the large Persian army.



Գնահատանքի երեկո



Արդեն մի քանի տարի է Բրիտանահայ Համայնքային Խորհուրդը կազմակերպում է գնահատանքի երեկո, շնորհակալություն հայտնելով իր հովանավորության ներքո գործող կառույցներին:

Այս տարի ևս, փետրվարի 20-ին այդպիսի գեղեցիկ հանդիպում էր կազմակերպվել Հիլթոն հյուրանոցի սրահում, Գևորգ Թահթեայան Կիրակնօրյա Ազգային Վարժարանի տնօրինությունը, հոգաբարձուները, ուսուցչական կազմը և ծնողական հանձնախումբը հրավիրված էին մասնակցելու: Երեկոյին ներկա էր և իր օրհնությունը բերեց սրբազան հայր Հովակիմ Մանուկյանը: Նման փոքրիկ, բայց և գեղեցիկ հանդիպումը գնահատական է դպրոցի սուրբ գործին, ինչպես նաև պարտավորեցնող:



The Armenian Community Council of Great Britain organised an evening of appreciation, thanking the organisations operating under its auspices. The headteacher, governors, teachers and members of the Parents' Association of K Tahta Armenian Community Sunday School were invited to a reception that took place at the Marriott Hotel in Kensington on 20th February. The Primate addressed and blessed all present.



Ընդհանուր Գիտելիքների Մրցույթ

Ինչպես ամեն տարի այս տարի էլ Գ. Թահթայան վարժարանը կազմակերպեց Ընդհանուր Գիտելիքի մրցույթ, որը տեղի ունեցավ փետրվարի 27-ին Վարժարանի սրահում: Մրցույթի հարցերը պատրաստել և այն վարում էր պարոն Հրաչ Թոքատյանը: Մեր շատ սիրելի ծնողական հանձնախումբը պատրաստել էր շատ համեղ ուտեստներ, որոնք ճաշակեցինք խաղի ընդմիջման ընթացքում: Շատ ուրախալի էր, որ հաղթող խմբերից մեկը մեր վարժարանի բարձր դասարանի աշակերտներն էին, որոնք շատ լավ պատրաստված էին մրցույթին:



As it has become tradition, K Tahta Armenian Community Sunday School hosted its annual Quiz Night in the school's dining hall on the 27th February. The quiz was organised by the school's Parents' Association and the interesting questions were prepared and the quiz led by Mr Hratch Tokatlian. This popular event was well attended and everyone enjoyed the exciting atmosphere and the delicious food prepared by the Parents' Association. One of the winning teams was the team of our older pupils.

Տիկին Նունե Սարգսյանի այցելությունը դպրոց



Փետրվարի 28-ին դպրոցի հյուրն էր մանկական գրող տիկ Նունե Սարգսյանը: Մանկապարտեզի և նախակրթարանի երեխաները մի տեսակ խանդավառությամբ էին լցված: Տիկ. Ն. Սարգսյանը իր հետ բերել էր մանկական գրքեր: Նա պատմեց իր գրած գրքերից մի գեղեցիկ պատմություն՝ փոքրիկ, քաչալ Ոգնու մասին: Որից հետո երեխաները թղթին հանձնեցին հեքիաթից ստացած իրենց տպավորությունները: Երեխաների ուրախությունը էլ ավելի մեծ եղավ, երբ տիկ. Նունեն նրանց նվիրեց իր հեղինակությամբ տպագրված գունավոր-նկարազարդ հեքիաթների գրքեր: Առաջին անգամը չէր, որ երեխաները վայելում էին տիկ. Նունե Սարգսյանի ներկայությունը իր գեղեցիկ և հետաքրքիր գրքերով:



Տիկին Նունե Սարգսյանի այցելությունը դպրոց



Շնորհակալություն տիկ. Նունե Սարգսյանին և կցանկանայինք, որ նա ավելի հաճախ այցելեր մեր երեխաներին:

Children's author, Mrs Nune Sargsyan, visited our youngest children at school on 28th February. She engaged the children by reading them one of her interesting stories about a bald hedgehog and then asked the children to illustrate the story in their own imaginative way. The children were very excited when Mrs Sarsyan presented each one of them with a colourful copy of one of her publications. It wasn't the first time that our children enjoyed Mrs Sargsyan's presence and her lovely books and we wish that she would visit us more often.



Մեծ Պահքի Հսկման Արարողություն



Մարտի 4-ին Սուրբ Սարգիս եկեղեցում՝ Մեծ Պահքի հսկման արարողութեանը մասնակցում էին Գ Թախթեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի ուսուցչուհիներ, հոգաբարձուներ և Ծնողական Ցանձնախմբի անդամներ: Արարողութիւնից յետոյ հսկման մասնակիցները Նուարդ Գիւլբենկեան սրահի մէջ հանդիպեցին Սրբազան հօր, Տէր Շնորհք Բաղդասարեանի հետ: Վարժարանի հոգաբարձուների ատենապետուհի տիկ Հ. Զրչեանը, հոգաբարձու տիկ Ռ. Բարսեղեանը և Ծնողական Ցանձնախմբի փոխ ատենապետուհի տիկ Ս. Ղարախանեանը մասնակիցներին մատուցեցին Պահքի համեղ կերակուրներ:

On march 4th after the Great Lent Liturgy at St Sarkis Church that was attended by the head-teacher, a few governors and teachers, a Lenten meal was served by the chair of governors Mrs Hermine Charchian and the ladies of K Tahta Armenian Community Sunday School's Parents' Association at the Nevart Gulbenkian Hall. Those present enjoyed a light meal and had the opportunity to meet and socialise with the clergy.

Please follow the link below if you need to purchase t-shirts for Sorts' Day
www.polo-shirts.co.uk



Մայրերի Տոնը



Մարտի 6-ին Վարժարանում նշեցինք Մայրերի տոնը: Այդ օրը մեզ այցելության էին եկել Սրբազան հայրը և Տեր Շնորհքը: Նրանք վարժարանի սաներին բացատրեցին մի շարք եկեղեցական ծեսերի և արարողությունների կարգը: Երեխաները մեծ հետաքրքրությամբ լսեցին և պատասխանեցին իրենց ուղղված հարցումներին: Կտակարանից մեկ հատված կարդաց տիկ Սոնան, իսկ տիկ Աիդայի դասարանի աշակերտները Պարույր Սևակի գրած գեղեցիկ բանաստեղծությամբ շնորհավորեցին բոլոր մայրերին իրենց տոնի առթիվ.

Մեր հույսի դուռն է մայրս,
Մեր տան մատուռն է մայրս,
Մեր օրորոցն է մայրս,
Մեր տան ամրոցն է մայրս...



Mothers' Day was celebrated at school on 6th March. This coincided with the visit of the Primate and Fr Shnork who blessed everyone and spoke to them about Great Lent as a time of abstinence and repentance and the importance of prayer that empowers our souls with heavenly grace, faith, hope and love. Upon request Mrs Sona also read a passage from the Bible. Eventually Mrs Aida's class recited a poem by Paruyr Sevak dedicated to all the mothers.

Սուրբ Զատիկ



Վերջապես եկավ մեր ամենասիրած և ամենասպասված տոներից մեկը՝ Սուրբ Զատիկը: Մարտի 13-ին մեր վարժարանում զատկական տրամադրություն էր տիրում: Ամենուրեք Զատիկին նվիրված զարդարանքներ, գեղեցիկ պասկաներ և շատ համեղ ուտեստներ էին, որոնք պատրաստել էին մեր շատ սիրելի ծնողական հանձնախումբը: Ճաշի ժամանակ ճաշակեցինք համեղ կերակուրներ: Կազմակերպվեց խաղարկություն, որն օրը ավելի հետաքրքիր դարձրեց:



There was a celebratory atmosphere in school on the last day of term with Easter decorations and tasty food prepared by the Parents' Association who spare no effort in making every occasion special.

2015-2016 Տարեշրջան



Առաջին եռամսեակ 06 Սեպտ. 2015 – 13 Դեկտ. 2015 Term I 06 September 2015 – 13 December 2016	
06 Սեպտեմբեր 06 September	Վերամուտ Back to school
18 Հոկտեմբեր 18 October	Մշակույթի Օր - Թարգմանչաց Տոն Culture Day
25 Հոկտեմբեր 25 October	Արձակուրդ Half-Term Break
22 Նոյեմբեր 22 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
13 Դեկտեմբեր 13 December	Նոր Տարուայ Հանդես New Year's Celebration
Երկրորդ եռամսեակ 10 Յունուար 2016 – 13 Մարտ 2016 Term II 10 January 2016 – 13 March 2016	
27 Փետրուար 27 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
14 Փետրուար 14 February	Արձակուրդ Half-Term Break
21 Փետրուար 21 February	Վարդանանց Տոն St Vartan's Day
06 Մարտ 06 March	Մայրերու Օր Mothers' Day
13 Մարտ 13 March	Զատիկուայ Հանդես Easter Celebration
Երրորդ եռամսեակ 10 Ապրիլ 2016 – 10 Յուլիս 2016 Term III 03 April 2016 – 10 July 2016	
17 Ապրիլ 17 April	Գեղարուեստի Օր Art Workshop
24 Ապրիլ 24 April	Ցեղասպանութեան Նուիրում Օր Genocide Memorial Day
22 Մայիս 22 May	Մարզական Օր Sports' Day
24 Մայիս 24 May	Արձակուրդ Half-Term Break
26 Յունիս 26 June	Դաշտահանդես School BBQ
10 Յուլիս 10 July	Ամավերջի Հանդես End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Ստելլա Թարվերդի, Տիկ Անուշ Գեղամեան, Տիկ Քրիստինէ Նանեան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիլիսանճեան